

գիտնականների աշխատությունները, կարևորում է Հայոց ցեղասպանության փաստի գնահատման խնդիրը Օսմանյան կայսրության մեջ մեկ այլ ճնշված ժողովրդի՝ արաբների կողմից: Արաբ պատմաբանները, լինելով մահմեդական ժողովուրդ, այսուհանդերձ, անվերապահորեն քննադատում են երիտթուրքերի կողմից իրականացված ոճրագործությունը հայերի նկատմամբ:

Ն.Հովհաննիսյանը եզրակացնում է. «Արաբ հեղինակները հայտարարում են, որ այս ցեղասպանությունը հանցանք է ոչ միայն հայերի, այլև համայն մարդկության դեմ: Հայոց ցեղասպանությունը նրանք համարում են «20-րդ դարի պատմության սև էջ», որը դեռ չի ունեցել իր Նյուրնբերգը»:

Ի.Ա.ԱՐԱՐՅԱՆ, Ցեղասպանությունը և ատժելիությունը Երևան, «Մխիթար Գոշ» հրատ., 1995, 54 էջ

Գրքույկը հրատարակվել է Հայաստանի իրավագետների և քաղաքագետների կենտրոնի որոշմամբ:

Հեղինակը համակողմանիորեն տվել է ցեղասպանության երևույթի բնորոշումը միջազգային համապատասխան փաստաթղթերի հիման վրա. «Գենոցիդը ծայրահեղ վայրենի, բարբարոսական գործողությունների ամբողջություն է, որ կատարվում է որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը կամ մասնակիորեն ոչնչացնելու դիտավորությամբ»:

Այս դիտակետից գրքույկում քննության են առնվում Հայոց ցեղասպանության նախապատրաստման և իրականացման հարցերը՝ հասնելով մինչև մեր օրերը, որոնք որակվում են իբրև ցեղասպանության զանազան եղանակներ:

Անդրադառնալով Բաքվի կոտորածներին, հեղինակը վկայակոչում է շախմատի աշխարհի չեմպիոն Գար-

դրի Կասպարովի խոստովանությունը. «Յենց միլիցիոներների և ներքին գործերի գործերի աչքի առջև հայերին սպանում էին և դուրս նետում պատուհաններից: Կառավարությունը շարունակում էր լռել: Ամբոխը խենթացած արյունից՝ ավելի ու ավելի էր գինվում՝ ձեռք բերելով անհավատալի քանակությամբ զենք: Վեց օր բանդիտներին թույլ տվեցին խոշտանգել քաղաքը: Երբ որոշվեց զորք մտցնել, այն ժամանակ ոչ մի հայ չէր մնացել քաղաքում»:

«Իրավաբանական առումով վերոհիշյալը ցույց է տալիս, որ Ադրբեջանում հայության դեմ կազմակերպված գործողությունները՝ սկսած Սումգայիթից մինչև այսօրվա շրջափակումը, մյուս արարքները (էլ չհիշատակելով անցած 70 տարիներին Նախիջևանի և Ուտիքի հայաթափումը) պարունակում են ցեղասպանության հանցակազմ», - եզրակացնում է հեղինակը:

Հենվելով քրեական համապատասխան օրենքների վրա՝ Ի.Արաբյանը գտնում է, որ անհրաժեշտ պաշտպանությունն ընդդեմ ցեղասպանության չի կարող դիտվել հանցակազմի բաղադրիչ մաս: Այնինչ, հիշատակելով այդպիսի դեպքեր սումգայիթյան ոճիրների օրերին՝ նշվում է, թե ինչպես Ադրբեջանի դատական օրգանները, անտեսելով օրենքը, դատապարտել են անհրաժեշտ պաշտպանության դիմող հայերին:

Այնուհետև Արաբյանն անդրադարձել է Վարդգես Յոլիյանի գործարած ջանքերին, որպեսզի ցեղասպանության զոհերի ժառանգները մասամբ հատուցում ստանան թուրքիայից: Այս նպատակով Վ.Յոլիյանը հավաքել է ութ հազար փաստաթուղթ-մեղադրանք և հանձնել միջազգային դատարան: Խոսվում է և նյութական այն վնասների մասին, որ կրել են հայերը 1915թ. և ավելի ուշ՝ 1988-ից հետո, Ադրբեջանում ուղղակի հափշտակումների և շրջափակումների հետևանքով:

Հեղինակը պահանջում է հաշվարկներ կատարել, քանի դեռ ուշ չէ, Ղարաբաղի և Հայաստանի կորուստների վերաբերյալ, որպեսզի ներկայացվեն միջազգային դատական ատյաններին:

«Ցեղասպանության ճանաչման, հանցակազմի որոշման և պատժաչափի սահմանման հարցերը» գլխում Արաբյանը գրում է. «Հայաստանի անկախ իշխանությունն իրավական բոլոր միջոցները պետք է գործադրի հայ ժողովրդի (այդ թվում՝ ԼՂԻՄ-ի) նկատմամբ գենոցիդի գործը միջազգային դատարան հանձնելու համար: Այս նպատակով Հայաստանի Հանրապետությունը պետք է ընդունի օրենք՝ ցեղասպանու-

թյան հանցանքի որակման, պատժատեսակի ու պատժաչափի և դրանց հետադարձ ուժ տալու մասին»:

Յեղիմակի կարծիքով գենոցիդի հանցակազմի որակումը պետք է ունենա հետևյալ ձևակերպումները.

Յողված 1. - Ազգի կամ ազգային խմբի պատկանելիության շարժառիթով սպանություն (որի համար պատժվում են ազատազրկմամբ 10-15 տարի ժամանակով, գույքի բռնագրավումով կամ մահապատիժ՝ պատճառած վնասի հատուցմամբ):

Յողված 2. - Դավադրություն, հանցանքների կատարում կամ գենոցիդի մասնակցություն:

Յողված 3. - Դիտավորյալ այնպիսի պայմանների ստեղծում, որը «հանգեցնում է տվյալ ազգի կամ ազգային խմբի ծննդաբերության լրիվ կամ մասնակի խախտմանը, նվազմանը կամ ծնվածների հիվանդությանն ու մահվանը...»:

Յողված 4. - Մի ազգի կամ ազգային խմբի երեխաներին մեկ այլ ազգին հանձնելը, եթե այն նպատակ ունի դադարեցնել որոշակի մարդկային ցեղախմբի գոյությունը:

Յողված 5. - Դիտավորյալ կյանքի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք խոչընդոտում են ազգային տվյալ խմբի զարգացմանը, մասնավորապես՝ հիմնական իրավունքներից և ազատություններից զրկելու եղանակով:

Յողված 6. - Մի ազգի կամ ազգախմբի լեզվի, կրոնի, պատմական հուշարձանների, մշակույթի և այլ արժեքների ոչնչացումը կամ յուրացումը:

Յուրաքանչյուր հոդվածին հետևում է պատժաչափը: Յեղիմակն իր սահմանումները կատարյալ ու վերջնական չի համարում, «Բայց այն առիթ ու հիմք կծառայի իրավաբանների, սոցիոլոգների ու պատմաբանների քննարկման համար, որպեսզի գենոցիդի վերաբերյալ ամեն մի հոդվածի հանցակազմի նկարագրական մասի և պատժատեսակի ու պատժաչափի դրույթը ճշգրտվի... ստանա օրենսդրական վերջնական ձևակերպում»:

Վերջում հեղիմակն անհրաժեշտ է համարում բարձրագույն ուսումնական հաստատություններում, հատկապես իրավաբանական և միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում, մտցնել ցեղասպանության և դրա պատժելիության դասընթաց: